ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅԱՆԸ

12.02.2019 17:23

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը **05.02.2019թ. դիմել էր** Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին՝ առաջարկելով հանձնարարել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին բացառել փաստաբանների մասնակցությունը խոչընդոտելու դեպքերը:

Հիշեցնենք, որ քաղաքապետին դիմելու առիթ էր հանդիսացել փաստաբան Նելլի Մովսիսյանի կողմից 04.02.2019թ. ՀՀ փաստաբանների պալատին ներկայացված դիմումը, որով վերջինս տեղեկացրել էր, որ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը խոչընդոտել է իր մասնագիտական գործունեության իրականացմանը՝ արգելելով, որպես վստահորդի ներկայացուցիչ, մասնակցելու հանձնաժողովի նիստին:

ՀՀ փաստաբանների պալատը 12.02.2019 թվականին ստացել է Երևանի քաղաքապետարանի գրությունը, որով **Երևանի քաղաքապետարանը վերահաստատել է իր հանձնառությունը ապահովելու փաստաբանների մասնակցությունը, մասնավորապես խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին:**

Գրությամբ նաև նշվել է, որ քաղաքապետարանը, մասնավորապես, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը պատրաստ են շարունակել համագործակցությունը Փաստաբանների պալատի հետ հանուն յուրաքանչյուր անձի իրավունքների պաշտպանության:

Գրությամբ անդրադարձ է կատարվել նաև փաստաբան Նելլի Մովսիսյանի հետ կապված միջադեպին, որի մասին փաստաբանը գրությամբ տեղեկացվել է:

Առաջարկվող նորություններ

08.12.2015ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

17.12.2015ԽՍՏՈՐԵՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ ՉԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

05.02.2019ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԴԵՊՔԵՐԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })